

**ԱՆԱԴԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ, Բայրոնը և հայ իրականությունը (հայերեն և անգլերեն), Եր., ԵՊՀ հրատ., 2013, 404 էջ + 4 էջ ներդիր**

«Գալուստ Կիլպենկեան հիմնարկութեան» հայկական մատենաշարով Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը գրքեր է լույս ընծայում սկսած 1998 թվականից և արդեն հրատարակել է հայագիտական բազմաթիվ աշխատություններ: Վերջերս այդ մատենաշարով լույս տեսավ բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» (հայերեն և անգլերեն) մենագրությունը, որտեղ համախմբվել, համակարգվել, ընդհանրացվել և ամփոփվել են հեղինակի՝ Ջ. Գ. Բայրոնին նվիրված բազմամյա ուսումնասիրությունների, հայ և օտար մամուլում տպագրված աշխատանքների, միջազգային գիտաժողովներում զեկուցումների արդյունքները:

Անհերքելի փաստ է, որ Ջ. Գ. Բայրոնի ստեղծագործության նկատմամբ հետաքրքրությունն արդեն երկու դար է, ինչ չի նվազում: Բայրոնի ազդեցությունն ի հայտ է գալիս բազմաթիվ երկրների, այդ թվում նաև Չայաստանի, տարբեր ժանրի և ուղղությունների գրողների երկերում: Իսկ Բայրոնի կյանքի այն էջերը, որոնք կապված են Մխիթարյանների հետ, դարձել են ոչ մեկ հետազոտության հիմք, առավել ևս, որ Բայրոնի շնորհիվ հայ պատմությունը, քնարերգությունը, մշակույթը սկսեցին հետաքրքրել արտասահմանյան բայրոնագետներից շատերին: Վստահորեն կարելի է պնդել, որ Բայրոնը, կամա թե ակամա, որոշ իմաստով դարձավ հայ մշակույթի քարոզիչն ամբողջ աշխարհում, առաջին հերթին՝ Արևմտյան Եվրոպայում: Ինչպես իրավացիորեն նշում է Անահիտ Բեքարյանը, «շատ անգլիական բանաստեղծներ են թարգմանվել հայերեն, բայց, այնուամենայնիվ, Բայրոնը թերևս անգլիացի միակ բանաստեղծն է, որ, հայերի նկատմամբ ունեցած իր սիրո ու հարգանքի համար, միշտ հիշվում և արժանանում է բարձր գնահատականի հայ իրականության մեջ: Սակայն, ցավոք, մինչև այժմ գոյություն չունի Բայրոնի և հայ իրականության առնչությունների վերաբերյալ համապարփակ, ամբողջական գիտական հետազոտություն: Իսկ եղած հետազոտությունների մեծ մասն էլ սիրողական բնույթի է և զերծ չէ առանձին անճշտություններից ու թերություններից» (էջ 12):

Ըստ այդմ, Ա. Բեքարյանն իր առջև խնդիր է դրել, հենվելով հիմնականում սկզբնաղբյուրների վրա, կատարել համակողմանի ուսումնասիրություն, ուստի բազմակողմանիորեն քննել և առաջին անգամ ընդգրկուն ձևով հայ և անգլիախոս ընթերցողին է ներկայացրել Բայրոնի և Մխիթարյանների առնչությունները, նրանց գիտական համագործակցությունը, ինչպես նաև բայրոնիզմի դրսևորումը հայ գրականության մեջ: Բնականաբար, մենագրության ամենահետաքրքիր էջերից է բանաստեղծի նամակների վերլուծությունը: Այդ նամակների շնորհիվ ժամանակի Եվրոպական մտավորականության համար առավել ճանաչելի են դարձել Մխիթարյան միաբանության դերն ու նշանակությունը, բարձրացել նրա հեղինակու-

թյունը և, անշուշտ, աշխուժացել հետաքրքրությունը հայագիտության առանձին խնդիրների շուրջ: Բովանդակալից է հատկապես Բայրոնի հայագիտական պարապմունքների, 1816-1821 թվականներին նրա գրած մամուլների, եվրոպական հայագիտության անցած ուղու բնութագրությունը: Վերջապես, կարևոր են Բայրոնի ստեղծագործության ու կերպարի հանդեպ հայ մամուլի ու գրողների ցուցաբերած բացառիկ հետաքրքրության, ինչպես նաև հայ գրականության մեջ մեծ բանաստեղծի «հետքերի» բացահայտմանը նվիրված էջերը:

Ա. Բեքարյանի մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վերջաբանից, չորս հավելվածից և օգտագործված գրականության ցանկից: Գլուխներն իրենց հերթին բաժանված են ենթագլուխների՝ պայմանավորված քննարկվող նյութի բնությով:

*Ներածության* մեջ հեղինակը հիմնավորում է մենագրության շրջանակներում ուսումնասիրվող հարցերի հրատապությունն ու այժմեականությունը, դրանց կարևորությունը:

Մենագրության առաջին գլխում՝ «Բայրոնը և Վենետիկի Մխիթարյանները», հեղինակն անդրադարձել է Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին, Ս. Ղազար վանքում նրա հայերեն սովորելուն, Բայրոնի երկերի՝ Մխիթարյանների և ընդհանրապես հայ մամուլի հրապարակումներին (առանձին գրքերով, ժողովածուներում և գրական հանդեսներում), ինչպես նաև օտարազգի հեղինակների՝ Բայրոնի և Մխիթարյանների առնչություններին վերաբերող աշխատություններին (ընդ որում՝ ոչ միայն գիտական, այլև գեղարվեստական գրականության մեջ):

Ինչպես նշվում է Ա. Բեքարյանի մենագրության մեջ, 18-19-րդ դարերում Ս. Ղազար կղզին դարձել էր մի փոքրիկ մանրանկարչական Յայաստան, որը գայթակղեցնում և իր գիրկն էր բացում հայ և օտարազգի այցելուների, առաջին հերթին՝ մտավորականների առջև: Անգլիացի ռոմանտիկ բանաստեղծը հոգու անդորր և խաղաղություն էր որոնում, որը գտավ հենց Մխիթարյան հայրերի մոտ: Բայրոնի հետագա կյանքը, թեպետ և շատ կարճ, առավել բեղմնավոր և հասուն դարձավ, որը հասկանալու համար գործադրված իմաստասիրական ճիգերը հազիվ թե կարող են արդյունավետ լինել առանց Մխիթարյան հայրերի մոտ անցկացրած ժամանակահատվածի հանգամանակից ուսումնասիրության: Մխիթարյան հայրերը սիրում էին այդ «խենթին», որը նորեն ու նորեն այցելում էր նրանց՝ նորանոր գաղտնիքներ ձեռք բերելու ակնկալիքով: Նրանք և՛ փայփայում էին, և՛ գնահատում իրենց «խենթ» բարեկամին, և՛ համագործակցում նրա հետ:

Ա. Բեքարյանի մենագրության մեջ մանրամասն ներկայացված են Բայրոնի և Մխիթարյանների համագործակցությանը անդրադարձած օտարազգի հեղինակների աշխատություններում Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունները, նրա և Մխիթարյանների առնչություններին վերաբերող նյութերը: Ծանոթանալով այդ ամենին՝ անվարան կարող ենք ասել, որ Նապոլեոնի հատուկ հրովարտակով (որի պատճենը, իմիջիայլոց, բերված է գրախոսվող գրքում, էջ 280) հայոց կրթության և գիտության կաճառ հռչակված Ս. Ղազար կղզու Մխիթարյան մայրավանքը յուրատեսակ սրբատեղի է դարձել ոչ միայն բանաստեղծի, այլև նրա անձով ու ժառանգությամբ հետաքրքրվող լրագրողների, գրաքննադատների, գրողների,

գիտնականների ու հասարակական գործիչների համար:

Քայլ առ քայլ հետևելով Բայրոնի կյանքի այդ հատվածին՝ մենագրության հեղինակը անհրաժեշտություն է զգացել ուսումնասիրելու Բայրոնի «հայկական» նամականին և 18-19-րդ դդ. եվրոպական հայագիտության պատմությունը: Այդ հարցերի ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են մենագրության *երկրորդ գլխում*, որտեղ հեղինակը Բայրոնի հարուստ նամականու, որի մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայերին, հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող էջերը, հանգամանալից վերլուծությամբ բացահայտում է Բայրոնի հասարակական, քաղաքական, գեղագիտական, փիլիսոփայական ու գրական հայացքների ձևավորման ու զարգացման ընթացքը, ներկայացնում 18-19-րդ դարերում հայ-եվրոպական գրական կապերի և եվրոպական հայագիտության զարգացման առանձին դրվագներ, ինչպես նաև Բայրոնի հայագիտական աշխատություններն (Յ. Ավգերյանի հետ միասին կազմած «Անգլերեն-հայերեն քերականություն», «Հայերեն-անգլերեն քերականություն») ու հայ մատենագրությունից նրա կատարած թարգմանությունները:

Չենց Բայրոնի՝ ի մասնավորի Թոմաս Մուրին և Ջոն Սըրրեին հղած նամակների միջոցով է անգլիախոս ընթերցողն առաջին անգամ ծանոթանում դեռևս 18-րդ դարում ամբողջ եվրոպայում մեծ համբավ ու հռչակ վայելած հայագիտական խոշոր կենտրոնի՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության, կատարած գիտական ու լուսավորական աշխատանքին և գաղափար կազմում նրա կարկառուն դեմքերի մասին: Բայրոնի նամականու, մասնավորապես դրա «հայկական» էջերի, մանրագնին ուսումնասիրությունը Ա. Բեքարյանին հնարավորություն է ընձեռել ավելի խորությամբ բացահայտելու 18-19-րդ դարերի հայ-անգլիական գրական առնչությունները, միաժամանակ նաև նոր և արժեքավոր տեղեկություններ ձեռք բերել նույն ժամանակաշրջանի հայ-եվրոպական գրական կապերի մասին: Այստեղ հեղինակն առանձնացրել է ֆրանսիացի անվանի հայագետներ Սեն-Մարտենին, Բելոյին և Ֆլորիվալին, որոնց թողած հայագիտական հսկայական ժառանգությունը նշանակալից դեր է խաղացել ինչպես ֆրանսիական, այնպես էլ ընդհանրապես եվրոպական հայագիտության զարգացման գործում:

Մենագրության «Հայ գրական-հասարակական միտքը Բայրոնի մասին» վերջին գլխում հեղինակը ներկայացրել է՝ ա) հայ բանաստեղծների (Սմբատ Շահազիզ, Յովհաննես Թումանյան, Ռուբեն Որբերյան և շատ ուրիշներ) ծոներգերը Բայրոնին, որի միջոցով նրանք բնորոշել են ազատության համար մարտնչող Բայրոն-մարտիկին, ինչպես նաև հայոց լեզուն, հայ գրականությունն ու մշակույթն ուսումնասիրող մեծ անհատին՝ տալով նրա խռովահույզ հոգու, խոհերի և պոռթկումների իրական նկարագիրը, բ) հայ գրական-հասարակական մտքի անդրադարձը Բայրոնին ու նրա ստեղծագործություններին: Սանրագնին քննարկվել են հայկական մամուլում Բայրոնի և նրա ստեղծագործությունների մասին զետեղված հայ և օտարազգի հեղինակների աշխատանքները, բացահայտվել և շտկվել են առանձին դեպքերում տեղ գտած սխալներ ու անճշտություններ, գ) բայրոնիզմի ներթափանցումը հայ գրականության մեջ, որը, հեղինակի կարծիքով, տեղի է ունեցել ոչ թե միանգամից, այլ տարիների ու տասնամյակներ

րի ընթացքում՝ հարստանալով, խորանալով և ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ և անուններ՝ Ղևոնդ Ալիշան, Միքայել Նալբանդյան, Սմբատ Շահագիզ, Հովհաննես Թումանյան, Ռուբեն Որբերյան, Ավետիք Իսահակյան, Դանիել Վարուժան, Եղիշե Չարենց և շատ ուրիշներ, ովքեր այս կամ այն չափով կրել են Բայրոնի անձի և ստեղծագործության ազդեցությունը, ինչպես նաև ունեցել բազմաթիվ նմանություններ և ընդհանրություններ Բայրոնի կյանքի և ստեղծագործության հետ:

*Վերջաբանում* ամփոփ և ընդհանրացված ձևով ներկայացված են հեղինակի կատարած ուսումնասիրությունների արդյունքները:

Մենագրության *հավելվածներում* բերվում են հատվածներ Բայրոնի նամակներից, Թոմաս Մուրի «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» գրքից, «Հայերեն-անգլերեն քերականություն» ձեռնարկի համար նախատեսված Բայրոնի գրած առաջաբանը և հայերենից կատարած նրա թարգմանությունները:

Գրախոսվող մենագրությունում զետեղված են նաև մի շարք նկարների վերարտադրություններ, լուսանկարների, գրքերի անվանաթերթերի, Բայրոնի հայերեն ձեռագրի և հայերեն ստորագրության պատճեններ:

*Նիդ. Նիյոթ Ահուազիս .*

*Քարտ Քառ Գաւաթ Գուլէ Դար . Դարակ*

*Երգէլ . Երբոր Զարէ, Զարէլ*

*Երգակ . Կերակի Զար . Զարաբար*

*Մար . Մարաբար Զիւ . Զագաւակ*

*Լուս . Զարակ*

**Բայրոնի հայերեն ձեռագիրը և ստորագրությունը**

Շատ կարևոր է այն հանգամանքը, որ Ա. Բեքարյանի աշխատանքը ներկայացված է նաև անգլերեն, ընդ որում՝ թարգմանությունը (թարգմանիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Բեքարյան) բավականին հաջող է և հնչում է անգլերեն: Մենագրության անգլերեն տարբերակը հնարավորություն կտա օտարալեզու մասնագետներին և ընթերցողներին ծանոթանալու հայերի հետ համաշխարհային գրականության հսկաներից մեկի՝ Բայրոնի ունեցած առնչություններին, Ս. Ղազար վանքում հայերեն սովորելու, հայագիտական ուսումնասիրություններ կատարելու փաստերին, և, ինչու չէ, նաև հետաքրքրվելու հայոց աշխարհի ու նրա

պատմության, հայ մշակույթի ու գրականության հարցերով, ընդհանրապես՝ հայերով, որոնց «երկիրը, - Մեծ անգլիացու բառերով ասած, - հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և, թերևս, նրանց լեզուն միայն ավելի խորը ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառնալու համար» (էջ 190): Բայց, ցավոք, ինչպես նշում է Բայրոնը, «և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով»:

Օտարալեզու ընթերցողներին հայ ժողովրդի պատմության և նրա գիտամշակութային գործունեության առանձին դրվագների ծանոթացումն այսօր առավել կարևոր է և արդիական, քանի որ հայ ժողովրդի համար ներկա բախտորոշ ժամանակաշրջանում մեր պատմության բազում իրողություններ և փաստեր մեր հարևան երկրների «մասնագետները» հաճախ փորձում են աշխարհին ներկայացնել խեղաթյուրված և աղավաղված՝ ցավոք ոչ միշտ ստանալով համարժեք արձագանք ու պատասխան:

**ՍՈՆԱ ՍԵՖԵՐՅԱՆ**